

ներու դիմելով՝ ուղղագրել, ճշդել և բազմացրել։ Դարձեալ՝ մեր ուսումնասիրած բոյսերուն դիմաց նշանակեցինք այն Հայկական բնավայրերը՝ որոնք Flora Orientalis-ի մէջ կը յիշուին։ Յետոյ տողեցինք ճշիւտ այն տեղւոյ անունը ուսկից այն ինչ բոյսը ժողովուած էր, զնեղով թուականը, զրկողին անունը, ռամկերէն կոչումը՝ եթէ բոյս յոգող գրած էր, և այլ գոհացուցիչ տեղեկութիւններ հաղորդեցինք։

Հազուագիւտ և քննադատելի տեսակներու ներքեւ մեր ըրած պատշաճութիւնները գրեցինք, մասնաւոր ընկելով անոնց բնորոշիչ յատկութիւնները՝ բաղդատմամբ մինչև ցարդ եղած նկարագրութիւններու։ Նաև պարզեցինք իտալական կամ էքրոպական խոյսերու հետ մեր ըրած բաղդատութիւններու արդիւնքը և տարբերութիւնները՝ որոնք որոշապէս կը տեսնուին Հայկական և օտար երկիրներու ցամաքած նմուշներու և բազմազանի պատկերներու վրայ։

Երեք էջի մէջ ալ մեր եզրակացութիւնը—բաժնի փոփոխութիւնը տողեցինք մեր այս ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՍԱԳՐՈՒՄ նախափորձին բովանդակած զբաղակարգութիւններու և տունկերու անուններուն ցանկը։

Արքունի Հաստատութիւն

էւ Տեղաբանական Պարտէզ Բաժնախոյն

5 Յունիս 1908

Ստորագրութիւն,

Մենք մեր ձեռնարկներուն վրայ սոյն տեղեկութիւնները տալէ վերջ կը համարձակինք խնդրելու բանիմաց և հայրենասէր անձերէ որ բարեհաճին բովանդակ Հայաստանի ամէն կողմերէն մեզի համար բազմաթիւ տունկեր բուսաբաղել տալով յիշել մեր Ս. Վազարու հասցէին։ Այս բանիս Ազգային լրագրութեան արձագանք ըլլալն անհունապէս նպաստելուն վրայ վստահ ըլլալով՝ կը հաւատենք որ անոնց ձեռնտուութեամբ մեր ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՍԱԳՐԱՆԸ հաստատուն գոյութիւն մը պիտի ունենայ և առաջինը պիտի ըլլայ Գիտական աշխարհի մէջ՝ քանի որ ո՛չ թիֆլիզ, ո՛չ Բեռլինպոլսկ, ո՛չ Մոսկուա և ո՛չ որ և է Եւրոպական Հաստատութիւններու մէջ զուտ Հայկական Բուսաբանի մասնաճիւղ մը չկայ։

Յաջողութիւնը կախումն պիտի ունենայ մեր բարեսէր ազգայնոց հոգածութենէն։

Հ. ՆՅՐՍԵՍ Տ.

Տօթոր Գիտութեան

ԼԱՏԻՆ ԼԵԶՈՒՆ

ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՆԱԽՆԵԱՑ ՔՈՎ

Ղ. Փարպեղայ քաչրիս առ Վահան Մամիկոնեան և Ս. Երանոսի Յոյցք առաքելական քարոզարեան։

Այսպիսի վերնագիր մը անշուշտ մտածել պիտի տայ իսկոյն Ստեփանոս Լեհացի մը լատին գիրքերու թարգմանութեամբ զբաղած, Պալենց մը որ կայսերաց և ճահանայակետաց գաւազնագիրքը կը յօրինէ լատին բնագրի հետեղութեամբ, Միաբանող Եղբայրներ որ հայ լեզուն և քերականութիւնը կը ձեռն լատիններէնի վրայ, Լամբրոնացի մը որ հոռոմէական եկեղեցւոյ ծէսեր և հանդերձանք կը հիւրասիրէ հայ կաթողիկէի ներքեւ։ Եւ պիտի դժուարի մարդ յիշողութեան սահմաններն ընդարձակելով դեռ աւելի ևս բարձրանալ դարերու սանդղոց վրայ և հանդիպել արդէն եօթներորդ դարու մէջ երկու հայ վանքերու Հոռոմայ մէջ իսկ, և դար մ'ալ առաջ՝ հայ վաճառականներու որ Աղեքսանդրիայէ կը մեկնին ի Հոռոմ տանելով ի միասին Ս. Միխայայ պաշտօնը, և կամ կէս դար մ'ալ աւելի վեր՝ գտնել Հոռոմայ շրջակայից մէջ Խորենացի մը որ ալեկոծութենէ ազատած կը թափառի հոն և գիտէ արդէն Սորակոտէ բլրոյն սրբազան աւանդութիւնները։

Ի զուր է դեռ աւելի բարձրանալ հին ժամանակագրաց վրայ հիմնուած՝ տեսնելու համար ներոնի կայսերական գահոյից ըով ամիթիթատեր մէջ բազմած թագազարդ Տիրիթը, որուն անդրին հաւանականաբար կը դիտենք մինչև այսօր Վատիկանու թանգարանին մէջ քարաքարս քաջատար յորջման տակ։ Բաւական է մեզ համար կենալ հինգերորդ դարու սեմոց վրայ և դիտել մեր ոսկեղէն գրականութեան երկու գահաւորներու հոռոմէական շրջագիծերը.—Վազար Փարպեղայ առ Վահան Մամիկոնեան զբաժնու թուղթը, և Ս. Երանոսի

Յոյցք ասարելական քարոզորհանձն գրոց
թարգմանութիւնը.—կ'ընտրենք այս երկու-
քը՝ ոչ իբրեւ բացառիկ երևոյթներ, այլ
իբրեւ ամենափայլուն և անակնկալ ապա-
ցոյցներ լատին լեզուի հմտութեան մեր
Նախնեաց քով։ Մին, որովհետեւ առաջին
տեսութեամբ զուտ ինքնագրութեան ամէն
յատկութիւնները կը պարունակէ, և եր-
կորոյրը, որովհետեւ հակառակ իրականու-
թեան՝ իբրեւ յունարէնէ թարգմանուած ա-
պացուցուեցաւ։ Երեսայինք ասոնց վրայ
յաւելուլ դեռ մի քանի գործեր ևս, և ի
շարմանս բանասիրաց, նաև Սլաթանգե-
ղոս—որ, հակառակ ամէն գրութեան
և ըստածներու, դեռ իւր հայ հանդերձից
ներքեւ կը գոչէ ի հաստատութիւն աւան-
դութեան թէ Հռովմայեցի է։

Ղազար Փարպեցւոյ թուղթը, որ մեր
մատենագրութեան ամենազեղեցիկ էջերէն
մին է, և որմէ զօրաղդաբար մի միակ
քնազիւր օրինակ (և այն ոչ այնքան հին՝
ինչպէս փափաքելի էր) ազատած է ժա-
մանակի աւերակներէն, շատ քննութեանց
և մեկնութեանց առիթ տուած է, ինչպէս
գրեթէ բոլոր մեր մատենագիրք, իւր առա-
ջին հրատարակութենէն ի վեր։ Ի սէր
համառօտութեան չենք ուզեր այդ քննու-
թեանց իւրաքանչիւրին արժէքը կշռադա-
տել հոս, կ'ըսենք միայն անցողաբար ի
վստահութիւն բանասէր ընթերցողաց որ մի
առ մի աչքի առջև ունեցած ենք զամէնն
ալ։ Սակայն անոնց ուրիշ ճամբայ մը բռնե-
լով, իրենց սրամիտ տեսութեամբք հան-
դերձ հայկական սահմանէն անդին չեն
անցած, և լեզուական խնդիր մը չեն դի-
տած երբէք, այլ գոհացած են միայն ձե-
ռագրի մի քանի ընթերցումներ ուղղելով
կամ ճշգրտել։ Ընդհակառակն տարբեր
ճամբայ մը կ'ընթանանք մենք և բոլորո-
վին նոր ասպարէզ մը կը նշմարենք բա-
նասիրական քննութեանց։

Փարպեցւոյ թղթին նկատմամբ գրչա-
գրական ներկայ աննպաստ պարագայից
մէջ թերեւս յանդգնութիւն մը համարուէր
մեր այս փորձը, եթէ զանազան և գրե-
թէ բացայայտ իրականութիւններ զմեզ
չթաշաւերէին։ Կ'ըսենք ուրեմն որ Ղ. Փար-
պեցւոյ այս թուղթը՝ ներկայ ձեւին մէջ
չէ հայկական ակզանագլխով՝ այլ լոկ Թալի-
մանութիւն լատին բնագրէ։

Թէ ինչ էր այդ բնագիրը, կը ջանանք
յետոյ մի քիչ պարզել, առ այժմ քաղենք
անոր լատինական հետքերը։

Թողլով զանազան բառեր որոնց առում-
ները լատիներէնի վերածելով կրնային ա-
ւելի ստուգուիլ ու ճշգրտիլ իմաստին պա-
հանջածին համեմատ, ինչպէս էջ 587 տող
2-3 զգաստութիւն = dignitas = պա-
տիւ, իշխանութիւն

613 տող 7 ի միջի լինել = interesse
= գոլ, ներկայ լինել

606 տող 18 կծկեալ = constrictus =
ստիպեալ, բռնադատեալ, և այլն

և էջ 608 տող 1) փարպիկեւ = fa-
talicus բառը՝ որ բուն իսկ լատիներէն
է, թէպէտ և Ռւս. Ն. Մառ կ'ուզէ զայն
մեկնել իբրեւ փարպ—իկեւ. թողլով նաև
յաճախ գործածուած պարսկոտառք բառը
որ զուտ թարգմանութիւն է հռովմայեցոց
յատուկ tunica և togatus բառերու,
որոնց հակառակ յունաց համար սեպհա-
կանած էին յատուկ palliatus բառը, առ-
նունք այնպիսի բառեր և դարձուածներ
որոնք ուղղակի անճիղջ կամ սխալ թարգ-
մանութիւններ են. այսպէս

էջ 570) տող 12 առն եղեալ որդի =
filius factus hominis = Որդի
մորդոյ որով կ'ուղղուի և բովանդակ
իմաստը. Առաջի Տեսնե Որդոյ մար-
դոյ.

610 տող 11 ըստ երոյ Տեսնե = juxta
ipsius Domini եայլն. որով՝ ըստ
Տեսնե ինչիս մեծ(ի) հրահանգին.

1. Հմմտ. Ստ. Մալխասեանց, Մինաս Ե. Տէր Պե-
րոսեանց, Էմիլ, Գր. Խաւթեանց, Դորաթի, Դաւթեան-
ցեանց, Եայլն։

2. Ելերու իշխանութիւնք կը զնենք ըստ մեր տը-
պագրութեան (վանդակ. 1873), Տփղիսու վերջին հրա-
տարակութիւնը սեւ ազգին մէջ շատ ընդհանրացած լը-
ւալով։

593 սող 4-5 դէմ յանդիման = alter-
rum կամ alter utrum=մի յեր-
կույց. ուստի և իմաստը. — այլ զվեր-
ջինսն թէ դիտացեալ էր Տեառնդ և
պահանջեալ համարս, որո՞ւմ արդիօք
յերկուց տեսնէի (կամ երեւի) առա-
ջի քոյ(ոյ) ընտրութեան զոլ արժա-
նի, զովութեան և կամ (= եթէ)
պարսաւանաց.

603 սող 14 պատասխայ երեսօք, իբր
չնկնեալ, տնկեալ կամ ի կտի դիմօք,
շփոթութեամբ լատին convolvero կամ
convelo և convello բայից.

611 սող 6-7 ոչ յերեկոյս ինչ ժամա-
նակաց = haud sero (tempore) =
ոչ տևողուն ժամանակաւ. որով բուն
իմաստը. ոչ տևողուն ինչ ժամանա-
կաց զրուցատրութեամբք... ծանու-
ցաւ մեզ, այլ առ մեօք իսկ և ի մե-
րում ժամանակի եղեալ տեսաց զայս
ամենայն:

Այսպիսի հետքեր կրնան դեռ մի քանի
հատ ալ շարուիլ, թէպէտ այսքան ալ բա-
ւական պիտի ըլլար նամակին փորձու-
թիւնը նկատի առնելով: Բայց լատինակա-
նութեան ամենախոր դրոշմը կը կրեն հե-
տեեալ չորս կէտերը, որոնք ըստ հրատա-
րակողաց յայտարարութեան հայերէն ընա-
գրի մէջ պակաս կամ խառնակ բան մը
նշմարել կու տան, մինչդեռ վերածուելով
լատիներէնի բացայայտ իմաստ մը կ'առ-
նուն: Անկեղծութեան համար ըսենք որ
այսպիսի կէտերու երրորդը (էջ 588 սողք
18-21) զանազան մեկնութեանց ընդու-
նակ ըլլալով հանդերձ դեռ չենք վստա-
հիր պայծառացած համարիլ: Հոս կը կար-
դանք.

« Իւ անուանէին բարեկամս ինձ եղ-
բարսդ սրբոյ զգին զըռանին զքո տեսն
եղօրօրողուով ». որուն համար տպագրողն
(Հ. Ախիշան վ.) կ'ըսէ. « Խառնակ և սխալ
կայ ի բանիդ. թերևս զգին պարտ իցէ
ընթեանուլ զերեսին և եղօրօրոյիս զ'եղօր-
օրոյով »: Իսկ թղթոյս յետին հրատարա-
կողը¹ կը յաւելուն. « Այս ուղղագրութեան
« դէմ նկատողութիւն և վերոյիշեալ աղա-

« աղուած հատուածի բացաղրութիւն տես
« Գր. Խալաթեանցի Գ. Փարպեցի և Գործք
« նորին եր. 43, ծանօթ: Թերևս ուղղելու
« է. « Եւ անուանէին բարեկամս ինձ՝ զեղ-
« բարսդ զերկոսին, հանդերձ քո տեսն
« եղօրօրողուով ». զորի՞ զ'ն զնեւով եղարարդի
« վրայս սրբոյ զգին՝—զերկոսին, և դրուսին
« կամ դրուսին՝ը անդերձ կարգալով »:

Մեր կարծեօք թարգմանութիւն ըլլալով
այդ՝ կրնանք ենթադրել սխալ ընթերցումներ
և թարգմանութիւններ բառերու, ինչպէս.
բարեկամ = dilectum փոխանակ delic-
tum = ոճիւր, եղեւն, որուն հիմամբ թերևս
և գրուած կարդացուի գրուած. դարձեալ
զգին յառաջ բերուի զոյգ արմատէ և հա-
մապատասխան jungo... մը ենթադրուի.
և կամ զգին համարելով իբր aestimatio
զգրուսնին ալ համարուի ծագած modius
և medius կամ mutuus բառերու շփո-
թութենէ. հուսկ հայ. զորն ևս կրնայ
կարդացուիլ ընդ քո, և այլ նման ենթա-
դրութիւններ որոնց վերջ չգար եթէ յայտ-
նապէս անմեկնելի խանգարում կամ պա-
կաս մը չուզենք տեսնել այս երկու տո-
ղերու մէջ. վերագոյն շարուած ենթադրու-
թիւնները զտեւով կրնանք մերձաւորապէս
ունենալ լատին ընադիր մը որ տայ հայե-
րէն. « Եւ ինձ ի յանցանս համարէին եղ-
բարքդ այդ սուրբք զփոխադարձ մտեր-
մութիւն (մեր) ընդ քո տեսնող եղօ-
րօրուոյ (կամ եղօրօրողուոյ) »: Սակայն
կը կրկնենք՝ այս ևս այնքան վստահելի
չէ, ինչպէս են միւս կէտերու համար մեր
տալիք յաջորդ մեկնութիւնները:

Յէջ 584 (սողք 1-3) յետ կարգաւ յի-
շելու զսուրբ հայրերը և անսխալապէս ա-
ղանդապետները յիշելէ առաջ, կը կար-
դանք.

« Յաղագս որոյ և զայլսն ամենայն և
զորս առ նոսա արանցն՝ ծառայք նորա
ունին զամենայն գրեալսն ».

Անիմանալի՝ հայերէնի մէջ, և ամենա-
պարզ իմաստով՝ երբ բառ առ բառ վերածուի

1. Գ. Տէր-Մկրտչան և Ստ. Մալխասեան, Տփղիս՝
1904 տես յէջ 195 հն. 5.

լատիններէն. «Աւստի և զայլսն ամենայն՝ գրեալս և զծածկեալ բայնն որ առ նոսա, զԱլբիոսի Աղեքսանդրացւոյ» եայլն. ուր յայտնի կը տեսնուի թարգմանչի շփոթութիւն մը լատին *vir* == այր և *civis* == բոյն բառերու, ինչպէս *servio* — ծառայիմ և *servo* == պահեմ, ծածկեմ բայերու: Դարձեալ հայերէն անմիկնելի միւս հատուածն ալ (էջ 586 տողը 13—17).

«Իսկ ես ոչ հրեշտակս և վարդապետ, և ոչ երբէք իսկ չեմ եղեալ բանիս այս ըստ երբէք ի հարցողաց ուրուք կամաց գործոյ իշխանութեան և ոչ երբէք».

Ի ի լատիններէն սխալ թարգմանուած բառերով, որոնք ուղղելով կ'ունենանք. «Իսկ ես ոչ հրեշտակս և վարդապետ, չեմ եղեալ ի՛նչ յանցանոր յայսմ՝ ինկրկով երբեք յոսմքէ գործ իշխանութեան»:

Լատիններէն սխալներն են. 1) շփոթութիւնը *res* == բան, իր և *reus* == պարտուոր, յանցանոր բառերու. 2) սխալ առումն *quaerens* բառի որ հաւասարապէս կը նշանակէ նարցանող և ինկրդոյ. և 3) զարձեալ սխալ ընթերցումն *a numine* == ի կամաց փոխանակ *a nemine* == ոչ յոսմքէ. 4) նոր կազմ հայ. ըստ կրթէք համաձայն լատին *ut* — *cumque* == ըստ այրում, իրիք մակրայի:

Հուսկ չորրորդ և յետին կէտն ալ որուն համար կը ծանուցուի թէ աղաւաղեալ եւ իմաստք բանիցս նոյնպէս կը պարզուի լատիններէնով, եթէ դիտենք որ *me* == զիս կարդացուած է *ne* == ոչ, և (տալով չիանգոյցանք) և շփոթուած են *senium* կամ *senex* == ծերութիւն, ծեր և *sinus* — *um* == գիրկ, ծոց. ուստի կը կարդանք յէջ 609—610 տողը 19—20, 1—4.

«Այլ ի դէպ համարիմ ընդ նոսին յիշել և զտէր Արքահամ զեպիսկոպոս, որում ըստ ձայնի խորհրդոյն և չհանգուցանէր ի ծերութիւնս, և կարող լինէի առ նմա գոնեա սուղ ինչ ժամանակ մնալ¹».

Փոխանակ կարդալու. «Այլ ի դէպ համարիմ ընդ նոսին յիշել և զտէր Արքահամ զեպիսկոպոս, որ ըստ խորհրդոյն ա-

նտե իւրոյ և զիս հանգոյցանք ի գոյն (*qui juxta vocis kամ nominis mysterium etiam me quiesceret in sinu*), և կարող լինէի առ նմա գոնեա սուղ ինչ ժամանակ մնալ»:

Հիմայ սակայն մեր առջև կը յառնէ դժուարին խնդիր մը. ինչպէս միկնել այս անակնկալ երևոյթը. ինչ է այդ լատիններէն գրութիւնն որու թարգմանութիւնը՝ ազար փարպեցւոյ ինքնագիր նամակի մը դիմակով կը ներկայանայ մեզ. ինչ ժամանակի գործ և ո՞վ է անոր թարգմանիչը: Խնդիր մը, որուն դիմաց վայրկեան մը կասեւելու իրաւունք ունինք առաջարկուած հարցումներու պատասխանելէ առաջ:

Յոդուածիս սկզբան առաջին տողերը անշուշտ բաւական ցոյց մ'իղան հաստատելու համար որ հայկական յարաբերութիւնը Հռովմայ հետ, առանց առասպելեալ աւանդութիւններէ մուրալու, պատմական լուսաւոր շրջաններու մէջ իսկ այնքան նոր չեն, ինչպէս թերեւ կը համարուէր. և հռովմական բանականը Հայաստանի հողոյն վրայ դրոշմելով իրենց հետքերը, թերեւ կը գրգռէին մեր ոստանիկ պատանիները տեսնելու այդ դիւթական քաղաքը որ Լուկուլլոսներ, Պոմպէոսներ կը ժայթքէր իրենց հայրենեաց վրայ: Սակայն եթէ հաւանական է այս հին Հռովմայ համար, աներկբայելի է նոր Հռովմայ նկատմամբ որ իր երկրորդ հիմնարկութեան օրերէն ի վեր սիրայօթար կ'ասպնջականէր այն Հայերը, որ քիչ յետոյ իւր կայսերական գահոյից վրայ բազմած կամ իւր բանակաց առաջնորդելով՝ մինչև հեռաւոր սահմաններ պիտի տարածէին իւր անունը: Այս տեղ մեր երանելի թարգմանիչը Սրբազան և աշխարհական գիտութեանց հետ, կ'ուսանէին անշուշտ նաև լատիններէն լեզուն. այս տեղ թերեւ մեր նախարարաց պատանիք արքունեաց շքեղ դահլիճներու և շոյալութեանց մէջ ծե-

1. Հոս մեր ապագրութեան ըստ մարի սխալ ընթերցումը ուղղած ենք ձեռագրին համաձայն և ըստ ուղիղ ընթերցումից Տփղիսու ապագրութեան, բայտ ձայնի:

քաժուռ փստածադիկ յունարէնի հետ ներդաշնակ շեշտերով կը սահեցնէին մանկական շրթանց վրայ հոովմէական կորովի բայց անոյշ բարբառը: Բարբարազարա այդ լեզուն հոն կը տրէր դեռ Եդարու մէջ ալ, թէպէտ և մերձ ընկզմելու յունական հոսանաց տակ, ինչպէս քիչ առաջ յունարէնն իր կարգին աւարտուած էր հին Հոովմայ կործանած պարիսպներէն դուրս, բարբարոս հրոսակներու յորձանքէն մղուած: Ի՞նչ հոս նոր քաղցին մէջ կը շարունակէին հնոյն պերճանքը, Ունորիոս և Ուրկադէոս Կայսերը կը թողթակցէին իրարու հետ լատիներէն, և ոսկերուդիս Ոսկերեբան հայրապետն անգամ իւր Խառլոյ մէջի բարեկամաց կամ պաշտպաններու հետ կը հաղորդակցէր լատիներէն:

Լատիներէն գրուած են իննովկենտիս Ուի նամակները առ Մեծ Աւարտեալը, Հայաստան որ իրեն յետին օրերու հայրենիքն եղաւ, որ անոր շնչէն հաւաքեց ամենաշեղծ իղձերը, որ անոր սրտէն խլեց ամենափափուկ շեշտերը, որ իւր ոսկի բառերուն համաձայն աւելի զուտ ոսկի լեզուով մը իւրացուց անոր բովանդակ մատենագրութիւնը, չառաւ միթէ նաև նամակներէն բան մը, միթէ մեր այս խնդրական նամակը չունի՞ իւր մէջ ինչ մը Ոսկերեբանեան: Պիտի պատասխանէ ժամանակն, հրք երևան հանէ թաքուցած Ոսկերեբանի շատ նամակները, երբ երևան հանէ Ղազարայ փարպեցւոյ միակ նամակի թաքուցած շատ մասերը: Հեռաւոր բայց շատ ազօտ նշմար մը հազիւ կ'որուազժի մեր աչաց առջև. ամբաստանութիւնը որոնց դէմ Ղազար կը պաշտպանէ ինքզինքը, — զրպարտութիւնը անբարոյական յորդորներու և գործոց, զրպարտութիւնը քարոզուած մոլորութեանց, զրպարտութիւնը անկարող մատակարարութեան ընչից եկեղեցւոյ, — իրենց շարժառիթ միակ նախանձով, են ճիշդ նոյն ամբաստանութիւնը որոնց դէմ Ոսկերեբան պիտի գրէր իւր շատագովականը, թերեւս առանց նշանաութեան չըլլայ և այն՝ որ մինչդեռ չէջ

583 Ղազարայ նամակին մէջ մի առ մի կը յիշատակուին յունական Ու. Հարք, չենք գտներ հոն Ոսկերեբանի անունը: Իւ նոյն իսկ վերագոյն յիշուած ոչ հրեշտակս և փոյրպակտ բացատրութիւնը՝ կը յիշեցնէ Ոսկերեբանի նման բացատրութիւն մը (ճառ նախ քան զարարանա). «յնամարտիւ կոչուողս մէկ, լղտառիմ հրեշտակաց մէկ»:

Ոսկայն մինչև որ ժամանակը հաճի պատասխանել իւր աւարները վերստին իրենց տէրերուն դարձնելով, մենք համարինք պահ մը որ Ղազար փարպեցին փոխանակ իւր շատագովականը գրելու համար այլքը նամակներու օգնութեան դիմելու (թէպէտ և ըլլան անոնք Ոսկերեբանի մը և առ ինչ նովկենտիոս քահանայապետ մը գրուած), դիմած ըլլայ ընդհակառակն ուրիշ հնարագիտութեան մը իւր թշնամեաց ձեռքէն ապահովուելու համար. և փոխանակ ուրիշներէ քաղուածներ թարգմանելու իր թղթին հիւսելու համար, նոյն իսկ այդ թուղթը ինքը լատիներէն գրած ըլլայ, զոր յետոյ այլք — նոյն իսկ մինչև ԺԻ—ԺԵ դարերու մէջ գտնելով՝ թարգմանած ըլլան ի հայ: Ղազարայ լատինագիտութեան վրայ տարակուսելի ներելի չէ, քանի որ ինքն իսկ այս շատագովականին մէջ փոխադարձ կ'ամբաստանէ իր հակառակորդաց չարութիւնը, որոնք իր յատկերէն գիրքերն անգամ չդարձուցին իրեն: Միշտ քհ. Տէր Պետրոսեանց դեռ աւելի առաջ կ'երթայ և Ղազարայ ձոռով բառը յայն թարգմանելով հանդերձ, կը համարի որ այդ լեզուով զանազան գրուածներ ունենայ. «Նոյն իսկ Յունական լեզուով նրա գրուածքներն էլ խլեցին» կ'ըսէ: Սակայն փարպեցին թոյլ չտար այդչափի. նա կ'ըսէ միայն. (էջ 592 սողը 12—17) «Զի անգամ և ԶԱՌՈՒՄ ԳՐԵՆԱՆԻ ոչ ետուն զինի իմ. որք կան այդր ընկեցեալ ի կերակուր ցեցոյ. բայց արդեօք կարդացեալ լուսաւորեացին ի դոցանէ ընակեալք ի տեղուշդ, և կամ զայլս լուսաւորիցեն»:

Ջարմանք մը միայն զոր չենք կրնար զսպել՝ արտայայտութի հոս, թէ ինչքա

մինչև ցայսօր ներկայ թուղթը քննողը և թարգմանողը այդ հոսում բառը միշտ և առանց բացատրության յոյ՛ւ — յունորեն հասկցած են և իթէ՛ փոքր աշխարհ կամ փոքր ազգ ըսելով հինգերորդ դարու մէջ կրնար հաւատարապէս հասկցողի թէ՛ հին հռոմէական քաղաքն ու ազգը և թէ՛ նոր Հռոմը — Բիւզանդիոնը և իր բնակչութիւնը, որովհետեւ մեծ և ազդեցիկ տարրը դեռ հնէն գաղթած պալատականներն էին հոն, կայսերական ծիրանւոյ անբաժանելի ծոպեր, անկարելի էր հոսում լեզու կամ բարբառ ըսելով հասկնալ յունարէնը, ինչպէս սովորութիւն եղաւ շատ ուշ. յոյները այդքան մեծ անուն դեռ չէին ժառանգած, և մեր Նիսինիք Ե.—Չ. դարերու մէջ հոսում գիր կամ լեզու ըսելով չէին տարակուսիր բնաւ թէ փոխանակ լատիներէնի ապագային կարելի պիտի ըլլար յունարէն հասկնալ, Բաւական ըլլայ միակ օրինակ մը հայկազեանէն քաղուած. — « Այս ի լեզուէ անտի հոսումն առաւ ի յոյն այսր »։ Եւս. Պոմ. —

Կը մնայ ստուգել հիմայ թէ արդեօք այդ լեզուն գիտէր նաև Ղազարայ պաշտպան Վահան մարգպանը, առ որ նա կը գրէ լատիներէն, ծպտելով կերպով մը՝ չարանախանձ արեղաներէ պատսպարուելու համար։ Շատ հաւանական կը թուի մեզ այս կէտն ալ, հաւանական ենթադրութեամբ մը որ Վահան ալ իւր ազգականաց՝ Աղանի և անոր հօրն ու հօրեղբոր, Վասակայ և Տաճատի, և մանաւանդ իր հօր Հմայեակի նման, ինքն ալ արդէն գնացած էր Պոլսոյ արքունական պերճութիւնը վայելելու։ Այս ժամանակ արդէն նոյն ազնուական թափորներն, նոյն իշխանազանց ուխտագնացութիւնը կը կատարուէին նախարարական բերդերէ ու զղեակներէ դէպ ի Պոլիս, ինչ որ ժամանակ մը հին Հռոմ.

մայ ազնուական պատանիք և պատրիկներ կը կատարէին դէպ ի Աթէնք։

« Յիրաւի՛ ամէն ինչ կարելի է, բայց իրականութիւնը (պատմութիւնը) կարելիաց սահմանէն դուրս է », կ'ըսենք մենք ալ իտալացի արդի հեղինակի մը հետ, երբ թողով Ղ. Փարպեցու թուղթը կ'անցնինք նոյն լատին լեզուն փնտռելու Ս. Եւրանոսի Յոյցը առաքիլական քարոզարկուն գրող թարգմանութեանը մէջ։ Անտարակոյս է թէ այդ թարգմանութիւնը կատարուած է ոսկեղարու երկրորդ շրջանի մէջ փոքր թարգմանչաց և շատ հաւանականաբար նոյն իսկ խորենացոյ ձեռքով. յամենայն դէպս խորենեան դպրոցի գործ մ'է որուն անհերքելի դրոշմը կը կրէ։ Սակայն չի բարդամուտած առարկան, ինչպէս տարակուսի կը կասկածին հրատարակիչը, հաւասարապէս տարակուսելով նաև յունարէն բնագրի մը գոյութեան. չի բարդամուտած նաև յունարէն, ինչպէս ապացուցուած կը համարի անտարակոյս իազմութեան մէջ։ Բնդհանրական Թարգմանութեան Եւստիմիոսի բնագրէ մը, որուն ամենախոր դրոշմները կը կրէ դեռ իւր վրայ, գրչագրական սովորական սխալներու, յետին ժամանակաց ու հեղինակաց ազդեցութիւններու հետ. այսպիսի հեղինակներէն կըրնանք յանուանէ յիշել Ստեփանոս Լեհացին որ զայս ունեցած է ի ձեռին¹, և ինչպէս նախնեաց ուրիշ թարգմանութեանց (օր. Յովսէփոսի) այսպէս նաև այս թարգմանութեան մէջ իւր գրիչը խաղցուցեր է։ Դիտել կու տանք հոս միայն այս կ'ըսը՝ որ իազմավէպի յարգոյ յօդուածագիրը, երբ կը յայտարարէ որ — « իր հայեւ » ըլնովը Յոյցըը հելլենարան դպրոցին

1. Des heil. Irenäus Schr. z. Erweise der Apostolischen Verkündigung. — Շրտ. Dr. Karapet Ter-Mekerttschian և Dr. Ter-Minassiantz. 1907 Leipzig.

2. Հայկազեանի վկայութեան համաձայն, Ստեփանոս մերինէն տարբեր օրինակ մ'ունեցած պիտի ըլլայ, ու

բովանակէ § 65 (էջ 48) Սարգստեղծի քառը կարգապատէ ի Սարգիստեղծ, և (էջ 25 § 34) « Եւ այն որ ի ձեռն փայտին յանդարն էին, յոճաւ ի ձեռն փայտին հուրութեան » պարբերութիւնը կը կարգայ ինք. « Չ'ի փայտին տարալուսութիւն ի ձեռն փայտին հուրութեան բռնկեալ »։

« կը պատկանի, — Յունարէն բառերու
« նիւթական թարգմանութիւնները, քերութիւնները,
« կանաչական ձեւերու, դասաւորութեան, հա-
« մաժայնութեան օտարութիւնները ճիշտ
« ըստ այնմ են եղած՝ ինչպէս որ կա-
« նոնադրած է թրակացիի քերականութիւնը
« թիւնը » — բաւական ճիշտ կը շօշափէ
և շատ մօտ կը զարնէ թիւը, ի բաց ա-
ռեալ յունարէնի յարելը. պէտք ենք սա-
կայն յաւելուլ որ յունարէնի և լատինե-
րէնի մէջ եղած քերականական ձեւերն ու
կազմութիւնը և նաև բառամթերից զանա-
զանութիւնը թարգմանութեան մը մէջ ու-
րոշել ամենադժուարին գործ է. մանա-
ւանդ երբ ունենանք (ինչպէս ներկայ պա-
րագայիս մէջ) խանգարուած թարգմանու-
թիւն մը, բաւական սխալագիր օրինակ
մը՝ և նախկին դարերու եկեղեցական
քնագիր մը, որուն լատիններէնը լի էր ան-
շուշտ յունական տարրերով, ինչպէս յու-
նարէն քնագիր մ'ալ լի պիտի ըլլար լա-
տինական տարրերով՝ այն ժամանակաց
սովորութեան համեմատ, մինչև իսկ գրե-
թէ յատուկ եկեղեցական կամ քրիստո-
նեայ յունարէն մը և քրիստոնեայ լատի-
ններէն մը կազմելու աստիճան, ճիշտ ինչ-
պէս այսօր դեռ ունինք քրիստոնեայ ա-
րարերէն մը՝ ի մի ջագեռու, և փոքր Ասիոյ
մէջ գաբրիէլ տաճկերէն մը : Շատ նշա-
նաւոր է այս նկատմամբ Է. դարու համար
u. Césaire d'Arles-ի վարքին մէջ կար-
դացածինս¹. *adjecit etiam atque com-
pult, ut laicorum popularitas psal-
mos et hymnos oraret, altaque et
modulata voce, instar clericorum
alii graece, alii latine prosas antipho-
nasque cantarent, ուր կը հրամայուի
որ եկեղեցւոյ պաշտամանց միջոց ոմոսք
յունարէն և ոմոսք լատինարէն երգեն :*

Քարեքաղաքար Ռոյցը-ի թարգմանու-
թեան մէջ մնացած լատիններէն քնագրի
հետքերը դեռ շատ զօրաւոր են : Մինք

հոս առնունք միայն լոկ մի քանի օրինակ
ի նպատակ կամ յապացոյց մեր դատին,
չուզելով ամբողջական վերլուծում մ'ը-
նել այդ գրոց :

Առաջին էջերէն իսկ (էջ 2 § 2.) ու-
նինք. « և վասն զի շարադրեալ կենդանի
է մարդ յանձնէ և ի մարմնոյ ». — զանց
առնելով յարադրեալ = *compositus* բա-
ռը որ նոյնպիսի համապատասխան բառ
մ'ալ կրնայ յունարէնի մէջ տալ, դիտել
կու տանք որ անձն բառը՝ փոխանակ
նոցոյ, միայն լատիններէն *anima*-յի միջ-
նորդութեամբ կրնայ մեկնուիլ, որ հաւա-
սարապէս կը նշանակէ նոցի և անձն. իւր
դէպքը ունինք նաև յէջ 31 § 42. « քանզի
այսր ոգւոյ յարութիւն լինի հաւատացե-
լոցն՝ մարմնոյ անդրէն ընդունելով գոնձն
(= գնդդի) են » :

Յէջ 5-6 § 6 կը կարդանք. — « Քրիս-
տոս Յիսուս տէրն մեր, որ մարգարէիցն
երեւեցաւ ըստ ձեռն մարգարէութեանն նոցա
և ըստ ունակութեան տեօքնութեանցն Հօր,
են », և կը դժուարինք մեկնութիւն մը
տալ. վերածելով սակայն լատին քնագրին
և ուղղելով սխալ ընթերցում մը, կ'ու-
նենանք *Secundum Patris* (կամ *a
Patre*) *capacitatum dispensationem*
(փոխանակ *dispensationum capacita-
tem*) = « ըստ անձնիւր կարողութեան
շնորհելոյ ի Հօրէ » . — Կրնանք հոս գու-
շակել նաև *habitus-a-um* մը, որ կու-
տայ մեզ դարձեալ նոյն իմաստը :

Յէջ 10 § 13 և 11 § 14 ունինք ու-
րիշ աւելի պայծառ նշմարներ, այսպէս.
— « ինքն Աստուած ինքզուովն արկ ի վե-
րայ Աղայան և ի քուն արար, և զի գործ
ի գործի կատարեցի » ոչն եղեալ ի դրաս-
տին ըունն, սայ եղև ի վերայ Աղամայ՝
կամեցեալ Աստուծոյ : Հոս ինքզուովն բա-
ռը յառաջ եկած է թարգմանչին *som-
nus-um* = քուն և *somnium* = տեսիլ
կայն՝ բառերու սխալ ընթերցումէն. նոյն-
պէս կատարեցի-ն է անճիշտ թարգմա-
նութիւն *perficeretur*-ի փոխանակ իմաս-
տին պահանջածին համեմատ դնելու ==
լիցի. այն ատեն կ'ունենանք ուղիղ ի-

1. Հմտ. Migne P. L. Cyprianus, *Vita Cae-
sarii* հտ. LXVII. 1008.

մաստ մը (և ոչ խառնակեալ՝ ինչպէս հրատարակիչը կը ծանուցանեն) և զի գործի յիցի գործոյ. և ամբողջ պարբերութիւնը կ'ուզողուի այսպէս. «ինքն մեծ բարբառիւն արեւ ի վերայ Աղամայ և ի քուն արաւ, և զի գործի յիցի գործոյ՝ ոչն եղեալ ի գրաստին քունն, սայ եղև ի վերայ Աղամայ՝ կամեցեալ Աստուծոյ»։ Այսպէս ալ յաջորդ պարբերութեան մէջ ամբողջ՝ է բառացի թարգմանութիւն լատ. integer (= ամբողջ և կոյս) բառի. մինչդեռ պէտք էր այս երկրորդը կոյս իմաստով թարգմանուիլ։

Սոյնպիսի սխալ թարգմանութիւններ բառից ունինք նաև յէջ 26 § 34 ի բառն «չարսեակէ (գխտոն որ է ի ստորինս երկրի)», յառաջ եկած շփոթութեամբ լատ. continuo = շարունակեմ և contineo = ունեմ, ստեղծեմ բայերու. և յէջ 25 § 32 պարբերութիւն. — «զմարդն ի վերստին «գլխաւորելով Տէր զնոյն այնմ զմարմնաւ» և տրութեան ընկալաւ տնօրէնութիւն, ի կու. «սէն ծնեալ կամաւը և իմաստութեամբն «Աստուծոյ»։ — ուր բառն ընկալաւ պէտք է ուղղուի = սկսաւ (լատ. cepit = ընկալաւ և coepit = սկսաւ)։

Բայց եթէ այս սխալ ընթերցումներն ու թարգմանութիւնները մեծ տարբերութիւն մը չեն բերեր ընագրի, նոյնպէս չեն յաջորդ գէպքերու սխալները, որոնք հայերէն իմաստը անիմանալի ընելու չափ կը խանգարեն։ Եւ յիշուի յէջ 12 § 16 աստատանայի համար կ'ըսուի. — «Եւ վասն զի ի ձեռն բարոց խրատուն ապատամբալ ի բաց եկաց յԱստուծոյ, աստանայ կու. չեցաւ... որ է ապատամբ»։ — արդ այս անիմանալի ի ձեռն բարոց խրատուն ուրիշ բան չէ բայց եթէ լատ. per morum consilium = յիմար խորհրդով (աստուածանալոյ). ուր morum է հայց. morus = յիմար բառի և ոչ յոգ. սեռ. mos = բարք, սովորոյք բառի։

Նոյնպէս է նաև յէջ 40 § 53 այս անիմանալի բացատրութիւնը. մեկնելով Եւսայեայ խօսքը, Երանոս կ'ըսէ. — «և «վասն մանուկն ասել զնա, սակայն և

«վասն անուն դնելոյն նմա. քանզի այս «մոյրտարին է և ծնիցելոյն, և անուն է «նմա կրկին՝ երբայական լեզուաւն Մեսիա «Գրիստոս, և հայովս Յիսուս փրկիչ»։ Հոս՝ շեղագիր բառերը վերածելով լատին բնագրի կ'ունենանք պայծառ իմաստ մը. «Եւ զի այս՝ և կոչումն բնութեան, (ուստի) և անուն է նմա կրկին, ևայլն»։ որով յայտնի կ'ըլլայ թարգմանչին սխալ ընթերցումը vocatio = կոչումն և vagatio = քափառումն, մոյրտարին կամ appellatio = կոչումն, անուն և aberratio = մոյրտարին բառերու, ինչպէս natura = բնութիւն — բառը շփոթելը և սխալմամբ իրեն նascon = ծնանիմ բայի դերբայ առնելը։

Սոյն այս պարբերութեան սկիզբը (յէջ 39) ունինք դարձեալ նման խանգարիչ սխալ ընթերցում մը. — «Եւ զի Գրիս» «տոս այս որ էր առ Հաւրն, նման ելով «Հաւրն, դարձեալ էր մարմնանալ և մարդ «լինել. ևայլն»։ Թարգմանիչը սխալ կարգացած ըլլալով բնագրի լատին voluerat = կամեցեալ էր կամ կամեցաւ բառը, կարդալով ընդհակառակն volverat = դարձեալ, լաւ ևս դարձուցեալ, յրեւալ էր։ Եւայլն, ևայլն։

Իրեն ապացոյց բաւ համարելով այսչափը, յուսանք որ մեր բանասէրը փոխանակ էր. թարգմանչին այսպիսի սխալները մեղադրելու, պիտի ուզեն իրենց քննական տեսութեանց նոր ուղղութիւն մը տալ ասկէ վերջ և շնորհակալ պիտի ըլլան իրեն որ այսպիսի գեղեցիկ գտնած մը ուզեր է ամբարել հայկական մատենագրութեան շտեմարանին մէջ լատինական դաշտերէ, ինչպէս իւր դասակիցը ալ ամբարած են յուսական ծիծաղկոտ բլուրներէ. թէպէտ և իրենք ալ լեզուական տեսակէտով՝ շատ աւելի երջանիկ ու բաղդաւոր չեն եղած, ինչպէս յաջորդ յօդուածով մը պիտի տեսնենք, ջանալով լուծել Ագաթանգեղոսի յառաջարանին առեղծուածը։

Հ. Յ. ԱՅԻՐԵՐ